

համարել առաջինը, եթե իր մէջ անմիջական եւ առօրեայ օգտակարութեան հանգամանք չունի: Նոյն իսկ այս բեմէն, այս ձեռնարկին առիթով արտասանուեցան խօսքեր, որոնք ինծի թոյլ տուին այս մէկ քանի դիտողութիւնները ընել բուն նիւթին անցնելէ առաջ:

Գեղեցկութիւնը ինքն իրմով կը գնահատուի. անիկա միջոց մըն է որ իր նպատակը իր մէջ ունի. կարելի չէ զայն իր փառաւոր եւ լուսեղէն ոլորտէն դուրս՝ օտար եւ խորթ ոլորտի մը մէջ արժեցնել. կարելի չէ հարցնել բնութեան թէ ինչո՞ւ գունագեղ ծաղիկներով կը զարդարուի եւ կարելի չէ հարցնել վարդին թէ ինչո՞ւ եւ ի՞նչ բանի համար իր բարդ բարդ ու դողդոջուն թերթիկները մայիսեան առաւօտ մը միայն, արեւին ամենանուրբ երանգներով կը վառին: Նոյնպէս կարելի չէ հարցնել գեղեցկապաշտ գրագէտին թէ ինչո՞ւ եւ ի՞նչ բանի համար գրած է այս ինչ էջը կամ այն ինչ հատորը. կարելի չէ իրմէ հաշիւ հարցնել թէ իր գրական կամ գեղարուեստական երկը կը համապատասխանէ՞ օրուան եւ ժամանակին պահանջներուն, դարման կը տանի՞ անոր թէ ոչ. ամէն մէկ էջ եւ ամէն մէկ գիրք որ հոգեկան կամ մտաւորական յուզում յառաջ կը բերէ, իր գոյութեան իրաւունքն ունի եւ եթէ նոյն իսկ անիկա համապատասխան չէ առօրեայ պահանջներու, անտարակուսելի է որ համապատասխան է գերագոյն շահի մը որ թերեւս անտեսանելի է մեզի եւ որուն ընդ առաջ գացած է սակայն հեղինակի հոգին. ահա թէ ինչո՞ւ գրական գործի մը գնահատումը կարելի է ընել միմիայն այն առաւել կամ նուազ յուզումի աստիճանէն զոր յառաջ բերելու սահմանուած է անիկա: Այս է պատճառը անշուշտ որ ճշմարիտ եւ գիտակից արուեստագէտները ամէն ժամանակի եւ ամէն երկրի մէջ խաղաղ անտարբերութեամբ մը նայած են արուեստին օտար քննադատներու սահմանումներուն եւ գնահատութիւններուն վրայ. անիկա սերմանողն է որ չի մտածեր հունձքին վրայ եւ ոչ ալ թէ ինչպէ՞ս եւ ո՞ր ժամանակ պիտի ըլլայ հունձքը. անիկա տեսանողն է որ կը խօսի եւ կը յուզուի այնպիսի